ՀԲԸՄ-ը աշխոյժ քայլերով

Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան նախաձեռնութեամբ կեանքի կոչուած Հայկական Փաստացի Համալսարանի (Armenian Virtual College) գործունէութիւնը արդէն բոլորած է երեք տարին: Անցնող երեք տարիներու ընթացքին այս նախաձեռնութենէն օգտուած են 63 երկիրներէ աւելի քան 2500 ուսանողներ: Նախաձեռնութիւնը այժմ իր գործունէութեան դաշտը կ'ընդլայնէ ընդգրկելով նաեւ թրքերէնը:

Այս մասին նախագիծին հիմնադիրներէն Երուանդ Զօրեան լրացուցիչ տեղեկութիւններ փոխանցեց: Զօրեան «Ակօս» կատարած իր այցելութեան միջոցին յայտնեց թէ հայերէնի ուսուցման ծրագիրը նախապատրաստուած էր բացի արեւելահայերէն եւ արեւմտահայերէնէ, անգլերէն, ֆրանսերէն, ռուսերէն եւ իսպաներէն խօսող աշակերտներու համար: Հիմա այդ ցանկը կ'ընդլայնի նաեւ հորիզոն բանալով թրքախօս աշակերտներուն: «Մեր ուսման ծրագիրէն օգտուողներու մեծամասնութիւնը հետաքրքրուած էին հայերէն լեզուի իմացութեամբ: Անոնք կը կազմեն ընդհանուր աշակերտութեան երկու երրորդը: Սակայն մեր համալսարանի ուշագրաւ բաժիններն են նաեւ հայոց պատմութեան, գրականութեան, երաժշտութեան եւ

արուեստի բաժինները: Դասընթացքներուն հետեւողները ուսման շրջանի աւարտին կը ստանան համապատասխան վարկանիշ եւ վկայական: Այդ վարկանիշները կարելի է օգտագործել նաեւ միջազգային համալսարաններէ ներս: Այսինքն Հայ Վիրտուալ Համալսարանի դասընթացքներէն ձեռքբերուած վարկանիշը կարելի է գրանցել ոեւէ այլ համալսարանի արձանագրութեան ընթացքին: Բացի անհատական դիմումներէ եւ արձանագրութիւններէ, մեզի հետ համագործակցած են տասը վարժարաններ, որոնց աշակերտները իրենց ուսման ծրագրին զուգահեռ կը հետեւին մեր կողմէ մշակուած ծրագրին եւ այսպէսով կ'ունենան գործնական աշխատանքի դաշտ: Ներկայ դրութեան մէջ հետաքրքրական երեւոյթ է համացանցային, կարծեցեալ նոյն դասարանի մէջ մէկտեղել Մօնթէվիտէոյէն, Մարսէյլէն, Մոսկուայէն, Տիյարպէքիրէն, Զիքակոյէն եւ Պաղտատէն աշակերտներ, որոնք թէ համացանցի միջոցաւ իրարու հետ շփուին եւ թէ մտնեն նոյն քննութեան: Նախագիծը անցնող երեք տարիներու ընթացքին արդէն փաստած է իր հեղինակութիւնը եւ հիմա մեզի առիթ կու տայ նոր հորիզոններու մասին մտածելու» ըսաւ Երուանդ Զօրեան:

Զօրեան 9 Հոկտեմբեր Շորեքշաբթի երեկոյ Մխիթարեան Սանուց միութեան մէջ հանդիպում մը ունեցաւ Իսթանպուլահայ կարգ մը դպրոցներու վարիչներուն եւ ուսուցիչներուն հետ:

Ծ. Խմբ.- Եթէ սփիւռքահայութեան կարեւորագոյն կրթական հաստատութիւններէն Մելգոնեանը փակելով ՀԲԸՄ ենթարկուեցաւ ծանր քննադատութիւններու, Հայ Փաստացի Համալսարանն ալ կու գայ այդ մեղքը մասամբ քաւելու իբրեւ արդար միջոց: Ուրեմն մենք ալ այս լրատուութիւնը պատրաստելու պահուն կու գանք մեր յաջողութեան մաղթանքը փոխանցել ծրագրի հեղինակներուն եւ գործիչներուն:

ԼՈՒՅԻՔԱ ՏՈՒՏՈՒ

Պայրամ-սէյրան

Կալիք շաբաթ պայրամ է: Աս ըսել է քիմ վաքանսի շրջան է, ինչու քիմ արթըխ ասանկ օրերուն տօնական իմաստը շատ շատերուն ումուրը պիլէմ չէ: Ամէն մարդ ամիսներ առաջուընէ փլաններ ընելէն, խըյախ վաքանսի պատրաստութեան մէջ է, ունեւորն ալ կ'երթայ կոր, չունեւորն ալ: Ատ քրէտի քարթերով, պէլքիմ ալ տարի մը տեւելիք թաքսիթներ ընելէն, վազն ի վազ կ'երթան կոր: Իւստէլիք ալ ինչ ըրին չըրին, պէճէրուեցան եւ երէքուկէս օրուան դադարը ինը օրուան վերածեցին:

Կենէ քաղաքը պիտի պարպուի, մնացողները պուտ մը շունջ պիտի առնեն, ամա ի՞նչ օգուտ, ամէն կողմ կոց պիտի ըլլայ: Հէմ ալ ինչու չիտեմ, վերջին տարիներուն էն առաջ դեղարանները կը կոցեն կոր: Հոգի ազատելիք դեղի մը պէտքութիւն ունենաս նէ տիյար տիյար նէօպէթճի դեղարան պիտի փնտռես: Եա հիւանդանոցներո՞ւն վիճակը, որ հիւանդանոցը կ'ուզես գնա, նէ շէնք շնորհք տոքթոր մը կը գտնաս նէ ալ հիւանդապահուհի: Պիւթիւն մասնագէտները արձակուրդի կացած կ'ըլլան: Աստուած հեռու ընէ, անհրաժեշտութիւն մը ըլլայ նէ, էշնահատակ կ'երթաս:

Վաքանսի կացողներն ալ օր մը պիլեմ չկորսունցունելու համար ամէնը մէկէն ճամբայ կ'ելլան: Հիչ մէկը օր մը ուշ էրթալ, օր մը կանուխ տառնալը աչքը չառներ: Հէմ էրթալնիքէն հէմ կալնիքէն պիւթիւն փոխադրական միջոցները թըխլըմ թըխըշ, ճամբաներն ալ քէօր կապ կ'ըլլան: Էտեւէն ի՞նչ կու գայ. հէլպէթ քիմ արկածները: Հիմա պիտի տեսնաք, կալ շաբթու վերջ պիւթիւն լուրերուն մէջ. սըրա սըրա վաքանսի արկածներ պիտի պատմուի: Մեղքը չէ՞. մէկ շաբթուան քէֆի համար ով կիտէ քանի հոգի պիտի վառի, քանի օճախ պիտի մարի:

Աս ըսածս փորձառութիւնով էղած նախատեսութիւն է: Ամէն էրկան արձակուրդէն ետքը նոյն պաները չըլլա՞ր կոր: Անճախ ծեզի «ճամբաները ուշադիր էղէք, պուտ մը ուշ ճամբայ էլէք, կանուխ վերադարձէք» կրնամ ըսել եւ ձեր ետեւէն՝ Աստուած պահէ տէյիմ կ'աղօթեմ:

Արտուշ Մինասեանի սէրը

ԾՈՎԻՆԱՐ ԼՈՌՄԱԿԷՕԶԵԱՆ

dzovinarl@rambler.ru

Հայաստանեան շէնքերը բաց են երկու կողմերից. դրսի կողմը փողոց է նայում, իսկ մուտքը բակի կողմից է: Բակում տաղաւարներ կան երկար սեղանով եւ նստարաններով, որտեղ թոշակառուները նարտի եւ տոմինօ են խաղում ու քննարկում երկրի վրայ ծանրացած խնդիրները, տեսակ մը ազգային ժողովներ են գումարում: Պատանիները հասակ առնելով նոյնպէս հաւաքւում են տաղաւարներում, բայց աւելի ուշ ժամերին եւ ի տարբերութիւն տարեցների, նրանք նստում են թիկնակին, ոտքերը իջեցնելով նստարանին:

Վրացական 10

Ամէն անգամ, երբ անցնում էի Վրացական փողոցի 10-րդ շէնքի բակով, իմ սիրտս հովացնում էր տարեցների համախմբուածութեան պատկերը, սակայն մի անգամ շտապօգնութեան մեքենան տարաւ նրանցից մէկին՝ Արտուշ Մինասեանին եւ երկու օր յետոյ՝ նրա հոգեհանգստին շէնքի երկայնութեամբ մէկը միւսի ետեւից շարուեցին սգոյ ծաղկեպսակները: Տխրութեամբ եւ որբացութեամբ լեցուեց բակի աշխոյժ տաղաւարը, ուր ոչ ոք այլեւս չուզեց նստել, տանել չկարողանալով Արտուշի բացակայութիւնը:

Սովորական մարդ էր Արտուշ Մինասեանը, միաժամանակ ոչ սովորական: Նա երբեք ոչ ոքու մասին վատ բան չէր ասում, իսկ երբ նրա ներկայութեամբ խօսում էին Հայաստանը լքելու մասին, նա յիշեցնում էր Համօ Սահեանի «Հայաստան ասելիս էլ մահն ո՞ւմ շունն է...» տողը:

Այսպիսի մարդիկ մէկ հատ են լինում երկրի, քաղաքի, թաղի մասշտաբով: Աստուած այդպէս է վճռել, որ նրանք աղի պէս սակաւ լինեն, բայց առանց աղի ճաշը անուտելի կը դառնայ...:

Ինչո՞ւ է Երկիրը պտտւում

Հայերէնում նրանց բնորոշում են մտաւորական բառով, ռուսերէնով ասում են ինտելիգենտ (lat.- intelligens, այսինքն հասկացող, իմացող, խելամիտ), երկու լեզուներում էլ ընդգծւում է մտաւոր լինելու յատկանիշը, թրքերէնը ընդգծում է միտքը որպէս լուսաւոր յատկանիշ, այտըն (aydın) նշանակում է ոչ միայն մտաւորական, այլեւ՝ լուսաւորեալ:

Այդպիսի մարդիկ աննկատ են մնում լրագրողների շրջանակում, որոնք նախընտրում են գրել յայտնի, ճանաչուած, անուն հանած պաշտօնավարողների մասին, իսկ իմ այսօրուայ հերոսը գրող-

Ֆրիդա Աղվալեան

ների հերոս է: «Ամէն գրող խօսում է այն բանի մասին, ինչ ի վիճակի է ասել միայն նա...: Նա, եւ միայն նա պիտի դա ասի եւ յետոյ կրկնի նորից ու նորից...»: Սա Ուիլեամ Սարոյեանի միտքն է, եւ Սարոյեանը գրում եւ կրկնում էր իսկական մարդկանց մասին: Այդպիսի մարդկանց մասին գրում էր Չեխովը. փոքր տեղ գրաւող իսկական մարդկանց մասին: Այո, կեանքում մտաւորականը աննկատ է, նա կայ եւ Արեւը շողում է, Երկիր մոլորակը պտտւում է իր առանցքի շուրջ, եւ նրան նկատում են միայն այն ատեն, երբ նա հեռանում է...:

1+1=1

Երեւակայէք սովորական Սովետական ընտանիք, բաղկացած ամուսնական զոյգից՝ Արտուշ Մինասեան ու Ֆրիդա Աղվալեան եւ երկու սքանչելի դուստրերից՝ Նունէ եւ Նազելի: Մտաւորականներ էին. նախկինում մտաւորական ասելով ի նկատի ունէին միայն այն սոցիալական խմբին պատկանող մարդկանց, որոնք կրթութիւն են ստացել եւ զբաղուած են ոչ թէ ֆիզիկական աշխատանքով, այլ՝ մտաւոր: Սակայն Արտուշն ու Ֆրիդան մտաւորական էին ոչ միայն կրթական առումով, օրինակ, նրանք շրջանաւարտ էին, երբ հանդիպեցին իրար՝ Արտուշը- համալսարանի տնտեսագիտականն էր աւարտել, իսկ Ֆրիդան բանասիրականը, պատրաստում էին շարունակել ուսումը ասպիրանտուրայում, բայց սիրահարուեցին եւ որոշեցին ընտանիք կազմել, իսկ դրա համար հրաժարուեցին շարունակել ուսումը. սա արդէն մտաւորականութեան աւելի բարձր դրսեւորում է:

Նունէն յիշում է, որ մայրը միշտ ինչոր մէկի համար շարադրութիւններ եւ թեզեր էր գրում. միշտ ուրիշի համար: Այդպիսին են իսկական մտաւորականները. նրանց հոգը անձնականից դուրս է եւ անշահախնդիր: Նազելին Նունէից աւելի փոքր է եւ մօրը բնաւ չի յիշում:

Այդ օրը Նունէն 13 տարեկան պիտի դառնար եւ դպրոցից տուն վերադառնալիս երազում էր, որ ամիսներ շարունակ հիւանդութեան ճիրաններում գտնուող մայրը այնքան առողջութիւն կ'ունենայ, որ ի վիճակի կը լինի ասել նրան «Շնորհաւորում եմ, աղջիկս», սակայն երբ նա տուն եկաւ, նրան չթողեցին մտնել մօր մօտ: «Չի կարելի» ասացին: 42 տարեկան էր Ֆրիդան...: Իսկ 45 տարեկանում այրիացած հայրը այսուհետ ոչ միայն հայր պիտի լինէր իր զաւակների համար, այլ նաեւ մայր, այսինքն սիրէր նրանց երկու հոգու փոխարէն: Ի՜նչ ծանր է սէրը, երբ երկուսի փոխարէն մէկին է բաժին ընկնում:

Ինչու կոմունիզմը տանուլ տուեց

Սովետական Միութիւնում ինչպէս յայտնի է մի կուսակցութիւն կար՝ կոմունիստական կուսակցութիւն, որոնց անդամներին ոչ թէ կոմունիստներ էին ասում, այլ պարտիականներ, այսինքն կարեւորը գաղափարը չէր, այլ կուսակցականութիւնը: Եւ ի՞նչ, պարտիականները պիտի կոմունի՞զմ կառուցէին: Ահա թէ ինչ է ասում այդ մասին Սոս Սարգսեանի «Ընդհատում» վէպի հերոսը, որը կուսակցական ղեկավարներից է. «Դաս առաջին. ծերտի մէջ ենք ապրում, դու ուզում ես չկեղտոտուել... Դաս երկրորդ. կոմունիզմը չի կառուցւում»:

Լուսաւոր ապագան ապուշների կերակուրն է: Կը կառուցուէր կոմունիզմը, եթէ դադարէինք ուտել, խմել, շոգել, կենակցել, նախանձել եւ այսպէս անվերջ մարդկային, հի՛, հի՛, հի՛, թուլութիւններ: Այսինքն այդ կատարեալ համակարգ ստեղծողները նոյնպէս պիտի կատարեալ լինէին բարոյապէս, բայց քանի որ մարդ արարածը թերի ու արատաւոր է եւ զոհ է գնում իշխանութեան, պաշտօնի գայթակղութիւնների, ապա փայլուն ապագան դարձաւ ընդամէնը կարգախօս. կարճ ասած կոմունիզմը հնարաւոր էր կառուցուել միայն իսկական մտաւորականների ջանքերով, որոնց ներքին կեցուածքը համընկնում էր արտաքինին: Այդ է պատճառը, որ երկրի փլուզումից յետոյ ազատութիւնը, որը շատերի համար հասկացուեց որպէս ազատագրում մշակոյթից, խղճից, քաղաքակիրթ լինելուց, նրանց ամենեւին էլ չփոխեց, որովհետեւ իսկական մտաւորականը միշտ ազատ է իրեն զգում, յենուելով ներքին կանոնադրութեանը:

Արտուշ Մինասեանն էլ պաշտօն ունէր. վարչութեան պետ էր, նախարարի տեղակալ (այն ժամանակ նախարարին մինիստր էին ասում), բայց նա վերցնողներից չէր, ընդհակառակն, երբ աշխատակիցներին երկար ամիսներ աշխատավարձ չէին վճարում նա ինքն էր վարձատրում նրանց, իսկ իր կեանքի վերջին օրը նա բոլոր հարեւաններին պաղպաղակ բաժանեց: Արդէն հիւանդանոցում, շրջապատուած մերձաւորներով, նա սիրոյ խօսքեր գտաւ ամէն մէկի համար: Յոգնել էր սիրելուց: Սէրն էլ հօ իր հետ չէ՞ր տանելու...:



Արտուշ Մինասեան